



ԻԴԵԱԼԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԻ ԴԱՌՍԱԿԱՆ ՄՈԴԵԼԸ *

ՀՏԴ 221.3

DOI: 10.52063/25792652-2023.3.18-89

ԱՆՆԱ ԱՐԱՄՅԱՆ

Նանծինի համալսարանի
փիլիսոփայության ֆակուլտետի
կրոնագիտության ամբիոնի ասպիրանտ,
ք. Նանծին, Չինաստան
annarm4@mail.ru
ORCID:0009-0005-7262-6189

Դառուղ Ծինը դառսականությանը վերաբերող ամենակարևոր տեքստերից մեկն է, որը Աստվածաշնչից հետո այլ լեզուներով ամենաշատ թարգմանված գրքերից մեկն է: Հայ իրականության մեջ դեռ չկա գրքի բնօրինակից ամբողջական թարգմանությունը: Սույն հոդվածը նպատակ է հետապնդում ներկայացնել Դառուղ Ծին գրքի 80-րդ գլխի հայերեն թարգմանությունը, ինչպես նաև ներկայացնել տվյալ գլխի որոշ կարևոր արտահայտությունների մեկնությունը՝ օգտագործելով Դառուղ Ծին-ի վերաբերյալ կատարված չինարեն մեկնությունները:

Աշխատանքի մյուս խնդիրն է վերլուծել իդեալական հասարակության, այն է՝ ուտոպիայի մասին պատկերացումները դառսական մի քանի աշխատությունների համատեքստում:

Աշխատանքը շարադրված է սկզբնաղբյուրների, դրանց անգլերեն թարգմանությունների, տարբեր հեղինակների՝ սույն թեմային առնչվող աշխատությունների համադիր քննությամբ:

Կատարված ուսումնասիրության արդյունքում կարելի է տեսնել, որ 80-րդ գլխում մեջբերված «փոքր երկիր՝ քիչ բնակչությամբ» մոդելը հակադրվում էր այն ժամանակվա չին տիրակալների ծավալապաշտական ձգտումներին և անհնար էր իրականացնել: Դառսականության երկու կարկառուն ներկայացուցիչներից Լաոձըն և Ճուանձըն նախնական պարզ հասարակարգին վերադառնալը դիտարկում էին որպես մարդկանց՝ խաղաղ ու երջանիկ ապրելու անհրաժեշտ պայմաններից մեկը: Դառսական ուտոպիայի ամենաանհրաժեշտ պայմաններից մեկն այն էր, որ մարդիկ ետ վերադառնան վաղ ժամանակներում պարաններ հյուսելով գրառումներ կատարելու ձևին, ապրեն շատ պարզ ու հասարակ կյանքով, բայց ամենակարևորն է՝ հարևան երկրների բնակիչների միջև չպետք է լինի հաղորդակցում:

Հիմնաբառեր՝ ուտոպիա, դառսականություն, Դառուղ Ծին, կարգ, իդեալական հասարակարգ, Ճուանձը, Լաոձը, նախնական հասարակարգ:

Նախաբան

Նոր, ավելի կատարյալ աշխարհի ստեղծելու մարդկային մղումը հավերժ է: Դա հատուկ է բոլոր քաղաքակրթություններին և ժողովուրդներին: Չինացի ժողովուրդը

* Հոդվածը ներկայացվել է 01.10.2023թ., գրախոսվել՝ 08.10.2023թ., տպագրության ընդունվել՝ 31.10.2023թ.:

իր հազարամյա պատմության ընթացքում ապրել է խառը ժամանակներ, պատերազմներ, սով, ապստամբություններ, տարբեր արքայատոհմեր փոխվում էին, տիրակալները՝ գահընկեց արվում, և այդ ամենը ուղեկցվում էր պատերազմներով ու տեղափոխություններով: Նման պայմաններում չին մտածողները իրենց գործունեությամբ և իրենց գործերում փորձում էին ի մի բերել այն պայմանների առկայությունը, որի դեպքում հնարավոր է վերականգնել խաղաղությունը՝ «երկնքի տակ» (天下 Tiānxià-թին սյա): Նրանք սկսում են վիճարկել ներկան՝ համեմատելով անցյալի և այն ապագայի հետ, որ կարող է լինել իրենց ուսմունքին հետևելու դեպքում՝ ըստ այդմ ձևավորելով իրենց ուստոպիստական հայացքները: «Վիճարկումը իրականությունից դուրս ձևավորում է իդեալական աշխարհի մոդել (ուստոպիա), որի գոյության իրավունքի համար մարդիկ ինքնակամ զոհողությունների են դիմում» (Հարությունյան 15): Այդ առումով դառսականությունը և կոնֆուցիոսականությունը ունեցել են հսկայական ազդեցություն չին ժողովրդի և չին տիրակալների վրա:

Ուստոպիան դա իդեալական համայնք է, որի բնակիչները գոյություն ունեն կատարյալ թվացող պայմաններում: Այս բառը հանդիպում է Թոմաս Մորի աշխատությունում, որով էլ հայտնի է դառնում աշխարհում (Utopia, Britanica): Հոդվածում մենք կօգտագործենք ուստոպիա բառը՝ որպես իդեալական հասարակության հոմանիշ հասկացություն: Կ.Մանհեյմի դիտարկմամբ՝ ուստոպիան կեցության նկատմամբ այնկողմնային պատկերացումների համախումբ է (Мангейм 166): Ուստոպիայի մեջ վերակերտվում է հասարակական իդեալը, այն իդեալները, որոնք մարդու կամ հասարակության կյանքի գնահատականն են, այստեղ ներկայացվում են նորովի կամ ամբողջապես հերքվում են: Չինական փիլիսոփայական միտքը ևս գերծ չի մնացել ուստոպիստական գաղափարներից: Կոնֆուցիոսականությունը, որպես ոչ միայն փիլիսոփայական ուղղություն, այլ նաև կենսակերպ, և դառսականությունը, որպես կրոնափիլիսոփայական ուսմունք, զարգացրել են իրենց արժեքամակարգին համապատասխան իդեալական հասարակարգի յուրօրինակ մոդելը:

Դառսականության և կոնֆուցիոսականության՝ իդեալական հասարակության մասին պատկերացումները սակայն միանգամայն տարբերվում են ոչ միայն նրանով, թե ինչպիսին պետք է լինի այդ ուստոպիան, այլև դրան հասնելու մեթոդներով: Ինչպես նշում է Լիդիա Չյանը՝ «Դասական կոնֆուցիական դիսկուրսում զգացմունքային հանգստություն է ձեռք բերվում՝ հետևելով ոսկե միջինին (zhongyong), որը կառուցված է սկզբունքի կամ պատշաճ վարքագծի և ծեսերի վրա: Դառսականները ներդաշնակությունը կապում են ավելորդ ցանկություններից և քաղաքակրթության կոռումպացված ազդեցությունից ազատվելու հետ» (Chiang 114):

Սույն հոդվածում փորձ է կատարվել ներկայացնել Դաոտը Ճին գրքի 80-րդ գլխի հայերեն թարգմանությունը, տրվել է այդ գլխի որոշ հատվածների մեկնությունը: Հոդվածում վերլուծվել է նաև դառսական մտածողներ ԼաոՉիի և Ճուանձըի իդեալական հասարակության մոդելը՝ համադրելով այն դառսական այլ գործերի հետ: Հոդվածում օգտագործել ենք վերլուծական, համեմատական ու համադրական մեթոդները: Տեքստի՝ չինարենից հայերեն թարգմանությունը կատարելիս մեծ ուշադրություն է հատկացվել տեքստի իմաստային թարգմանությանը, որը իրականացնելու համար օգտագործվել են Դաոտը Ճինի մասին գրված չինարեն մեկնաբանական գրքերը, օրինակ՝ Չեն Գայինգի «Լաոգիի անոտացիա և թարգմանություն», Սու Ճըի «Լաո Չիի մեկնաբանություն», ինչպես նաև չին-անգլերեն բառարաններ: Տարբեր ուսումնասիրողների՝ և՛ չին, և՛ օտարերկրացի հեղինակների աշխատությունները նույնպես օգտագործվել են՝ վերլուծելու համար իդեալական հասարակարգի մոդելը, որը առաջարկվել է ԼաոՉիի և Ճուանձըի կողմից:

«Դառտը Ծին»-ի 80-րդ գլխի մեկնություն

Չինական փիլիսոփայության մեջ և չինացի գրողների ստեղծագործություններում հաճախ կարելի է հանդիպել այսպես կոչված ուտոպիստական հայացքների, որտեղ հեղինակը ներկայացնում է իր համար երանելի աշխարհի գոյությունը: Լաոճըի ութսուներորդ գլուխը հենց այդպիսի մի երևակայելի աշխարհի մասին է, որը խոր ազդեցություն է թողել հետագա դարերի չինական փիլիսոփայական մտքի և գեղարվեստական գրականության վրա:

80-րդ գլխում կարդում ենք՝

«Փոքր երկիր՝ քիչ բնակչությամբ,

Ունեն գեներ, բայց չեն օգտագործում

Մարդիկ արժևորում են իրենց կյանքը, այլ ոչ թե գնում հեռավոր վայրեր:

Չնայած ունեն սալ ու կառք, բայց չեն օգտագործում:

Չնայած ունեն գեներ ու զրահ, բայց օգտագործելու կարիք չկա:

Մարդիկ վերադառնան հանգույցներով նշումներ օգտագործելուն:

Կունենան համեղ ուտելիք, գեղեցիկ հագուստ, կապրեն խաղաղ ու ուրախ սովորությամբ:

Չնայած հարևան երկրները տեսանելի են հարևանությամբ, և լսվում են հավերի ու շների ձայները,

Բայց մարդիկ ծերանում են ու մահանում՝ առանց իրար հետ հաղորդակցվելու» (老子今注今译345):

小国寡民。使有什伯之器而不用;使民重死而不远徙。

虽有舟舆无所乘之, 虽有甲兵无所陈之。使民复结绳而用之。

甘其食, 美其服, 安其居, 乐其俗。邻国相望, 鸡犬之声相闻, 民至老死, 不相往来 (老子今注今译345)。

Դառտը Ծին գրքի 80-րդ գլխում Լաոճըն ներկայացնում է իդեալական հասարակության իր մոդելը, որի գոյության դեպքում մարդիկ կարող են ապրել խաղաղ ու երջանիկ: Լաոճըի երջանիկ երկրի մոդելը պարզ է և հասարակ, ինչպես ինքն է նշում՝ «փոքր երկիր՝ քիչ բնակչությամբ» (小国寡民 Xiǎoguó guǎ mín): Լաոճըն կարծում է, որ իդեալական երկիրը չպետք է չափազանց մեծ լինի, ոչ էլ գերբնակեցված լինի:

Շատ ուսումնասիրողներ այս գլուխը համարում են «ուտոպիա»: Լաոճըի ուտոպիայում պատերազմ չկա, ժողովուրդն ապրում և աշխատում է խաղաղության ու գոհունակության մեջ: Լաոճըի պատկերացմամբ՝ իդեալական երկիրը պետք է փոքր լինի, մարդիկ՝ սակավ, ապրելու միջոցները՝ բավարար, բայց ոչ շռայլ, մարդկանց կյանքը՝ հարմարավետ, բայց ոչ ճոխ, իսկ հարևան երկրների հետ հարաբերությունները խաղաղ են, բայց պասիվ և ընդհանրապես կարիք չկա հարևան երկրների հետ հաղորդակցվելու: Դա է պատճառը, որ այս գլուխը վերջանում է հետևյալ արտահայտությամբ՝ «մարդիկ ծերանում են ու մահանում՝ առանց իրար հետ հաղորդակցվելու» (民至老死, 不相往来 Mín zhì lǎosǐ, bù xiāng wǎnglái): Լաոճըն չի ցանկանում, որ մարդիկ իրար հետ հաղորդակցվեն, մի տեղից մյուս տեղը գնան, քանի որ այդպիսով նրանց անդորրը կխախտվի, մարդիկ կսկսեն շատ բաներ տեսնալ, շատ բան գիտենալ, իսկ երբ սկսում են շատ բան տեսնալ ու գիտենալ, այլևս չեն կարողանա բավարարվել նրանով, ինչ ունեն, ինչն էլ կբերի շատ դժբախտություններ: Դա է պատճառներից մեկը, որ Լաոճըն առաջարկում է ետ դառնալ հին ժամանակներում որպես գրառման մեթոդ պարաններ օգտագործելուն՝ 使民复结绳而用之 Shǐ mín fù jié shéng ér yòng zhī-վերականգնել հանգույցներ հյուսելով նշումներ կատարելու ձևը: Այլ խոսքով՝ այստեղ Լաոճըն առաջարկում է վերականգնել վաղ անցյալում օգտագործվող գրի պարզագույն մոդելը: Իսկ ի՞նչ էր դա իրենից ներկայացնում: Հանգուցային

նշումները (结绳记事 Jié shéng jìshì) «պրիմիտիվ հասարակության» կողմից նախաձեռնված տնտեսական գործունեությունը և դրանց քանակական հարաբերությունները հանգույցների տեսքով արտացոլելու ձևն է: Հանգույցային գրառումները նախնադարյան մարդկանց կողմից լայնորեն կիրառվող գրառման և հաշվառման մեթոդներից մեկն է եղել: Օրինակ՝ չինական հնագույն «Փոփոխությունների գրքում» (《周易·系辞》“Zhōuyì·xì cí”) հանգույցներով նշումների մասին այսպես է հիշատակված՝ «Հին ժամանակներում մարդիկ կառավարվում էին հանգույցներով նշումներ անելու միջոցով: Հետագայում սրբերն օգտագործում էին Յին՝ գրքեր գրելու համար, հարյուրավոր պաշտոնյաներ՝ կառավարելու, իսկ բոլոր մարդիկ՝ զննելու համար») “上古结绳而治，后世圣人易以书契，百官以治，万民以察” (《易·系辞下》): Վերոնշյալ արտահայտությանը գրեթե նույն ձևով հանդիպում ենք նաև Թայփին Յուլան գրքում (太平御覽 Tàipíng yù lǎn)¹ և Ճուանձըի² մոտ:

Լաոձըի այս հատվածը բազմաթիվ մեկնաբանությունների տեղիք է տվել: Որոշ չինացի հետազոտողներ կարծում են, որ Լաոձըի մտածողությունը մի տեսակ հետընթաց է, բացասական ռետորո՝ մատնանշելով, որ Լաոձըի ցանկությունը, որ մարդիկ «չհաղորդակցվեն միմյանց հետ մինչև ծերանալը և մահանալը», հակասոցիալական միտք է: Այն նաև թույլ է տալիս մտածել, որ դաոսականությունը դա անարխիզմ է (Roger T. Ames 27-47), սակայն քիչ չեն այն հետազոտողները, որոնք ցույց են տալիս, որ Լաոձըի արտահայտած իդեալական հասարակարգը բնավ էլ անարխիզմ չէ, քանի որ Նրա մեջ կան արիստոկրատիա և տիրակալներ, որոնց կոչ է արվում պահել պարզությունը մարդկանց մեջ և հետևել Դաոյին (Frederic L. Bender 5-26):

Բացի այդ, ուսումնասիրողների մեկ այլ խումբ նշում է, որ Լաոձըն բնավ նկատի չունի վերադառնալու նախնական հասարակության պարզ ձևին, քանի որ նա նշում է «երկիր» բառը, որն իրենից արդեն ենթադրում է կառավարման համակարգ, բացի այդ, կա նաև զորք, որը սակայն կարիք չկա օգտագործելու, այլ Լաոձըն ցանկանում է, որ լինի կայուն տնտեսություն, կառավարիչները չենդացնեն հասարակ ժողովրդին, թույլ տան փոքր գյուղական տնտեսությունը ազատ ու բնականորեն զարգանա (老子今注今译 laozi jinzhu jinyi 345): Մեկ այլ կարծիքի համաձայն՝ Լաոձըն այս հատվածով ոչ թե ներկայացնում է իդեալական հասարակության իր մոդելը, այլ այլաբանորեն նկարագրում է մարդու մտավոր-հոգեկան աշխարհը (老子今注今译 Laozi jinzhu jinyi 346):

Նախ եկեք տեսնենք, թե ինչու է Լաոձըն արտահայտում «փոքր երկիր՝ քիչ բնակչությամբ» և «չհաղորդակցվեն միմյանց հետ մինչև ծերանալը և մահանալը» մտքերը: Լաոձըն ապրում էր մի դարաշրջանում, երբ պետությունների միջև անընդհատ պատերազմները, Նոր տարածքներ գրավելու՝ տիրակալների տենչը և պատերազմական գործողությունները հանգիստ չէին տալիս հասարակ ժողովրդին: Մի կողմից, նա իրականությունը հակադրում է իդեալին և օգտագործում է

¹ 太平御覽 Tàipíng yù lǎn-Թայփին Յուլան- Թայփին դարաշրջանի ընթերցումների գիրք է, չինական հսկայական [եյշու հանրագիտարան, կազմված մի շարք պաշտոնյաների կողմից՝ Լի Ֆանգի հսկողությամբ 977-983 թվականներին: Այն պատմիրվել է Սոն արքայատոհմի կայսերական արքունիքի կողմից՝ թագավորության առաջին դարաշրջանում Թայգոնգ կայսեր կողմից (Johannes Kurz, The Compilation and Publication of the Taiping yulan and the Cefu yangui, 2007); <https://ctext.org/text.pl?node=367719&if=en&filter=440221&remap=gb>

² Ճուանձըն (մոտ մ.թ.ա. 369— մ.թ.ա. 286 թ.) չինացի մտածող, դաոսական ուսմունքի ամենաազդեցիկ ներկայացուցիչներից մեկն է: Նրա աշխատությունը կրում է իր անունը և համարվում է դաոսական կարևոր տեքստերից մեկը: Նրա երկը կազմված է 33 գլուխներից, որոնցից 7-ը, որոնք վերագրվում են հենց իրեն Ճուանձըին՝ կոչվում են «ներքին գրքեր», իսկ մնացածը՝ արտաքին ևխառը գրքերը՝ Նրա հետևորդների գրչի արդյունք են:

գեղեցկությունը իդեալում, որպեսզի հակադրի իրականում գոյություն ունեցող խավարն ու չարը, որոնք բոլորն էլ պայմանավորված են կառավարիչների կողմից ժողովրդին «փայփայել չգիտենալով» և անխոհեմ գործելու մեջ: Ուստի իշխողին Լաոձըն գգուշացնում է որդեգրել «անգործության կառավարման» մեթոդը՝ «ուվեյ» 无為 (Laozi 2, 3, 37, 43, 48), ոչ թե կամայականորեն միջամտել ու վնասել ժողովրդին: Մյուս կողմից՝ «քիչ մարդ ունեցող փոքր երկրի» իդեալական պետության միջոցով նա հույս ունի փոխել հեգեմոնիայի և ուժի ընդլայնման ձգտող կառավարիչների հայեցակարգը: Սուճըն (苏辙) գրում է. «Լաոձըն ծնվել է անկում ապրող ճոռ ողիսատիայում, նրա գրականությունը գերակշռում է գռեհիկ սովորություններին և «ուվեյ» էր փրկությունը: Հետևաբար իր գրքի վերջում նա արտահայտեց իր կամքը և պատրաստ էր ունենալ փոքր երկիր» (魏源 Wey Yuan):

Այնուամենայնիվ, երբ Լաոձըն առաջին անգամ առաջարկեց «փոքր երկրի» գաղափարը, այն հակասում էր մարդկանց լայն շրջանակի սոցիալական քաղաքականությանը, ինչպես նշում է Հու Ջիչուանգը (胡寄窗 Hújìchuāng) իր «Չինական տնտեսական մտքի պատմություն» գրքում (《中国经济思想史》 Zhōngguó jīngjì sīxiǎng shǐ). «այսպես կոչված «փոքր երկրի» քիչ մարդկանցով» գործարկվեց ի պատասխան այն ժամանակվա «մեծ տարածք՝ շատ բնակչություն» քաղաքականության: Նրանք (չին մտածողները) կարծում էին, որ «մեծ տարածք՝ շատ բնակչություն» քաղաքականությունն է բոլոր աղետների հիմքը... Նրանք չէին հասկանում, որ «մեծ տարածք՝ շատ բնակչություն» քաղաքականությունը արտացոլում է միասնական կալվածատիրական ռեժիմի պատմական առաջադրանքը: Դա նոր արտադրական հարաբերությունների պահանջն էր: Փոքրիկ երկրի իդեալը, որն ունի քիչ բնակչություն, հակասում էր այն ժամանակվա պատմական առաջադրանքին» (中国经济思想史 Zhongguo jingji sixiangshe):

Մեկ այլ հետազոտող Հսիաոն նույնպես նկատում է, որ Լաոձընի ուստոպիայի գրեթե յուրաքանչյուր տարր հակասում էր իր ժամանակի իրական պայմաններին. «Անտիկ ժամանակաշրջանի բոլոր քաղաքական համակարգերից միակը, որը որոշ չափով ավելի մոտ է թվում նրա իդեալին, վաղ Յինի և ՆախաՅին ցեղային մշակույթների նախնական Էտապի քաղաքակրթություններն են: Իսկ պարզունակ ցեղը, խիստ ասած, իրականում քաղաքական կազմակերպություն չէ: Այսպիսով՝ եթե մենք ասեինք, որ Լաոձըն հակադրվում էր բոլոր քաղաքական կառույցներին, որոնք գոյացել են Արևմտյան ճոռից և ավելի ուշ, դա արդար հայտարարություն է թվում» (Hsiao 300):

Իդեալական հասարակության մասին պատկերացումները ըստ դաոսական այլ աղբյուրների

80-րդ գլխում Լաոձըն առաջ է քաշում ետ վերադառնալու նախնական պարզ հասարակարգի իր հայեցակարգը, վերադառնալու հասարակության այն նախնական ձևին, որտեղ օգտագործվում էին գրի պարզ ձևերը, որտեղ մարդիկ ապրում են պարզ, գոհ են նրանով ինչ ունեն, և չեն փնտրում որևէ այլ բան հարևան երկրներում: Բացի Լաոձընից, դաոսականության մեկ այլ կարկառուն ներկայացուցիչ Ճուանձըն նույնպես ներկայացրել է իդեալական հասարակության իր պատկերացումները: Նա գրում է.

«Նախնիկնում մարդիկ կապում էին լարերը և օգտագործում էին դրանք [գրավոր սիշերի փոխարեն]: Նրանք վայելում էին իրենց [կոպիտ] ուստիքը, հիանում էին [պարզ] հագուստով, հիանում էին իրենց [պարզ] ճանապարհներով և իրենց [իմաստ] տներում էին: Հարևան պետության տեսադաշտում նրանք կարող էին լսել թռչունների և շների ձայները: Այդպիսով մարդիկ հասնում են ծերության և մահանում՝ առանց նույնիսկ երբևէ այցելելու միմյանց: Նման ժամանակ չկար այլ բան, քան կատարյալ կարգը» (Chuang Tzu 10 (Waipian), Quqie):

昔者[...], 民結繩而用之, 甘其食, 美其服, 樂其俗, 安其居, 鄰國相望, 雞狗之音

相聞，民至老死而不相往來。若此之時，則至治已。

Դժվար չէ նկատելը, որ այս հատվածը և Լաոճրի վերոնշյալ գլխի մեջ նկարագրվածը շատ նման են, սակայն այն տարբերությամբ, որ եթե Լաոճրի իդեալական հասարակության մոդելը վերաբերում է ապագային, ապա Ճուանճրի նկարագրությունը վերաբերում է անցյալին, այսինքն՝ անցյալում կար ժամանակ, երբ ամեն ինչ «կարգին էր», մարդիկ օգտագործում էին պարզ նշումներ, շուրջըրորը խաղաղ էր, կար հասարակ ուտելիք և լավ հագուստ, ապրում և մահանում էին իրենց երկրում՝ առանց դեգերելու հարևան երկրներում:

Այնուհետև շարունակելով իր պատմությունը՝ Ճուանճրն ցույց է տալիս, թե ինչ պատճառներով է «կարգը» խախտվում հասարակության մեջ: Ամեն ինչ սկսվում է, երբ բնակիչները սկսում են տեղեկություններ ստանալ հարևան երկրների պայմանների մասին, նրանք սկսում են ուշադրություն դարձնել այդ բաներին և անխուսափելիորեն «Ձգելով պարանոցը և բարձրացնելով գարշապարը» (yanjing juzhong 延頸舉踵)՝ նրանք սկսում են համեմատել իրենց պետությունը հարևան պետությունների հետ, «զարգացնում են կռվի ոգին»՝ ի վերջո հեռանալով և անտեսելով իրենց տունը՝ փնտրում են իրենց չունեցածը այլ երկրներում: Ըստ Ճուանճրի՝ այն, ինչ մարդիկ ցանկանում են ձեռք բերել, դեռևս նյութական հարստությունը չէ, այլ ոչ նյութականն է, գիտելիքը (zhi 知): Տվյալ հատվածն ավարտվում է հորդորով. «Երբ բարձրակարգ (superior people) մարդիկ իսկապես սիրում են գիտելիքը և առանց ճանապարհի են (դառ), ուրեմն երկնքի տակ գտնվող բոլորը մեծ խառնաշփոթի մեջ են» (Chuang Tzu 16): Գիտելիքի ասելով այստեղ նկատի ունի Դաոն, այսինքն երբ մարդիկ չեն հետևում դաոյին, չեն ապրում դաոյով, ապա աշխարհի բնականոն կարգը խախտվում է:

Պարզ ապրելակերպը, որ առաջ է քաշվում Լաոճրի և Ճուանճրի մեջ, դա չի վերաբերում միայն նյութական պարզությանը, դա վերաբերում է նաև հոգևոր, մտքի և սրտի պարզությանը, միայն այդ կերպ կարելի է վերադառնալ նախնական մաքուր, բնական վիճակին և ձեռք բերել անմահություն (Laozi 44, 46):

Հետևաբար Ճուանճրն դատապարտում է գիտելիքը՝ որպես, հիմնովին արհեստական և կեղծող միջերես «ես»-ի և տիեզերքի միջև (Steavu 305):

Թայփին գրքում Ճուանճրին վերագրվող հետևյալ տողերից ակնհայտ է դառնում, որ իդեալական, պարզ հասարակության ձևը կամ իդեալական կյանքի դաոսական հայեցակարգը դա հորինվածք չէ և ոչ էլ անհնարին իրականացնել, այլ ընդհակառակը՝ Նույնիսկ եղել է մի ժամանակ, երբ մարդիկ իսկապես ապրել են նման կյանքով: Սույն հատվածում պատմվում է այն ժամանակների ու այն ընտանիքների մասին, որոնք ապրել են պարզ ու երջանիկ կյանքով՝ «Ասում են, որ հին ժամանակներում եղել են Սիրոնչենգ ընտանիքը, Տաթին ընտանիքը, Բայիուան ընտանիքը, Ճոնհին ընտանիքը, Լիլու ընտանիքը, Լիլին ընտանիքը, Սուանյուեն ընտանիքը, Խըսու ընտանիքը, Ծուկու ընտանիքը, Ճուրոնգ ընտանիքը, Ֆուսի ընտանիքը և Շեննոնգ ընտանիքը: Այդ ժամանակ մարդիկ պարաններ էին կապում և օգտագործում, և Գուո Սյան ասաց. «Սա բավարար է արձանագրման համար»» (《太平御覽》 Tai Ping Yu lan, 叙皇王上):

“又曰：昔容成氏、大庭氏、柏皇氏、中央氏、栗陆氏、骊连氏、轩辕氏、赫胥氏、尊卢氏、祝融氏、伏羲氏、神农氏，当是时也，民结绳而用之，郭象曰：足以纪要而已也”。

Շարունակության մեջ նշվում է, որ մարդիկ ապրում էին բավարարության մեջ, ունեին բավարար ուտելիք և գեղեցիկ հագուստ. «Նրանք միշտ բավարարվում էին նրանով, ինչ տեղին էր: Եթե մտածեին շռայլության ու ավելորդության մասին, նրանց դժգոհությանը վերջ չէր լինի», մարդիկ ապրում են խաղաղության մեջ, հարևանները իրար դեմ դիմաց են, կարելի է լսել հավերի և շների ձայները, բայց մարդիկ իրար հետ չեն հաղորդակցվում մինչև ծերանալը և մահանալը (《太平御覽》 Tai Ping Yu lan, 叙皇王上):

Թեև դաոսական այս կարևոր տեքստում, ինչպես տեսնում ենք, չի նշվում, որ

«փոքր երկիր՝ քիչ բնակչությամբ» անհրաժեշտ պայման է եղել երջանիկ ու խաղաղ ապրելու համար, սակայն կարևոր է եղել պարզ ապրելակերպը, ինչպես նաև հարևան պետությունների բնակիչների՝ միմյանց հետ չհաղորդակցվելը, ինչպես Լաոձըի ու Ճուանձըի մոտ էր:

Իրականում Լաոձըի և Ճուանձըի՝ իդեալական հասարակարգի մասին արտահայտած գաղափարների ուսումնասիրությունը շատ կարևոր է, քանի որ ազդեցություն են ունեցել նաև հետագա դարերի չինացի մտածողների ու գրողների վրա՝ Նշանավոր գրական գործիչներ Թաո Յուանմինից (Tao Qian Tao Qian; 365–426 թթ.) մինչև Սու Շիին (Su Dongpo; 1037–1101թթ.)¹:

Ավելի վաղ դաոսական տեքստերում ևս կարող ենք հանդիպել իդեալական հասարակարգի մասին մեջբերումների: Բաոֆուձը գրքում, որը վերագրվում է Գը Յոնին (葛洪, ապրել է 283-364թթ.) կարողում ենք. «Անցած ժամանակներում տիրակալներ ու հպատակներ չկային: Յոթեր էինք փորում և խմում: Մենք արտեր էինք մշակում ու ուտում: Երբ արևը ծագում էր, մենք աշխատում էինք, իսկ երբ մայր էր մտնում՝ հանգստանում էինք: Մենք լողացինք [կյանքի միջով] առանց կապանքների: Մենք կարող էինք առատորեն բավարարել մեր կարիքները: Ոչ մի վիճաբանություն, շահույթ չի եղել: Պատիվ ու խայտառակություն չկար: Լեռները ունեին ոչ ճանապարհ, ոչ արահետներ, իսկ ջրային ուղիներ՝ ոչ նավակներ, ոչ կամուրջներ: Գետերն ու հովիտները չէին հաղորդակցվում, հետևաբար ոչ ոք չէր ձգտում ձեռք բերել ուրիշների հողը: Մենք կարող էինք ոտք դնել սոված վագրերի վրա և բռնել թունավոր օձերին: Մենք կարող էինք անցնել ջրերը՝ առանց ճայերի ու թռչող թռչունների, և մտնել անտառներ՝ առանց վախեցնելու աղվեսներին ու նապաստակներին: Իշխանությունն ու հարստությունը դեռ չէին բողբոջել, ուստի դժբախտություն և անկարգություն չէր առաջացել: Վահաններ և նիզակներ չեն օգտագործվել, այդ պատճառով չեն կառուցվել ամրություններ և խրամատներ: Տասը հազար Էակները ապրում էին խորը միասնության մեջ՝ Դաոյի մեջ մոռանալով իրենց: Ժանտախտը չէր շրջանառվում, և ժողովուրդը կարող էր ապրել իր կյանքը: Իրենց մեջ մաքրություն ունենալով՝ խաբեբայական մտքեր չէին առաջանում: Այդ դեպքում ինչպե՞ս կարող էր լինել շորթում, որպեսզի թալանվի մարդկանց հարստությունը: Ինչպե՞ս կարող էին լինել խիստ օրենքներ, որպեսզի թակարդի մեջ գցեն նրանց» (Baopuzi waipian 48.498–99):

曩古之世，無君無臣，穿井而飲，耕田而食，日出而作，日入而息，泛然不繫，恢爾自得，不競不營，無榮無辱，山無蹊徑，澤無舟梁。川谷不通，則不相並兼。[...] 飢虎可履，虺蛇可執，涉澤而鷗鳥不入飛，入林而狐兔不驚。勢利不萌，禍亂不作，干戈不用，城池不設，萬物玄同，相忘於道，疫癘不流，民獲考終，純白在胸，機心不生。[...] 安得聚斂以奪民財，安得嚴刑以為坑阱？

Չնայած այս նկարագրությունը վերցված է ավելի վաղ դաոսական ուսուցիչներից, բայց այն շեշտում է որոշակի թեմաներ, ինչպիսիք են պարզությունը, տարբերակման կամ հիերարխիայի բացակայությունը (հասարակության անդամների, մարդկանց և կենդանիների, կամ արարածների և նրանց շրջակա միջավայրի միջև), որոնք հանդիպում են նաև Լաոձըի ու Ճուանձըի մոտ: Եվս մեկ անգամ ցույց է տրվում, որ մարդիկ անցած ժամանակներում ապրել են ավելի ազատ, երջանիկ, առանց վախերի, քանի որ ամենուրեք տիրում էր պարզությունը, չկար գեները օգտագործելու կարիք, այսինքն՝ ապրում էին խաղաղության մեջ, բնությունը ու մարդիկ ներդաշնակ էին, կենդանիները չէին վնասում մարդկանց և հակառակը: Այլ խոսքով՝ ուսուցիչն դա ինչ-որ անհասանելի երևույթ չէր, այլ մարդիկ ապրել են այդ իրականության մեջ հին ժամանակներում:

Ֆորեսթը Լինը Նշում է, որ դաոիզմի նման վերաբերմունքը բնականության (自然

¹ **Stu Tao** “**Taohua yuan ji**” 桃花源記 (‘Spring of the Peach Blossom’); and **Su** “**Shuixiang ji**” 睡鄉記 (‘Record of the Land of Sleep’).

zi ran) նկատմամբ, հարգանքի և ինքնաբուխության իդեալը բազմիցս աջակցություն է ցուցաբերել այն անհատներին, որոնք իրենց ճնշված են զգացել Կոնֆուցիական կարգի կողմից, որը մ.թ.ա. 3-րդ դարի վերջին դառնում է Չինական կայսրության ուղղափառ դպրոցը և մնում է առաջին դիրքերում՝ բացառությամբ համեմատաբար կարճ ժամանակահատվածների, մինչև 20-րդ դարի սկիզբը: Դաոսականությունը ըստ էության ավելի անհատական է, բնական և բացասական-ժխտող, մինչդեռ կոնֆուցիականությունը հավաքական է, բարեփոխական, էթիկական և դրական (Forest Lin 18):

Դաոսական մտածողները մարդկանց անընդհատ հիշեցնում էին մի պարզ հասարակության մասին, որտեղ մարդիկ ապրել են բնության հետ ներդաշնակ և գործել են ըստ իրենց ինքնաբուխ ցանկությունների: Լաոձըն և Ճուանձըն հաստատում էին այն գաղափարը, որ մարդկանց պետք է թողնել ազատ, թողնեն, որ մարդիկ գնան ըստ բնական հոսանքի՝ «շունցի գըրան» (順其自然 Shùn qí zìrán) և չպետք է ուսուցանվեն, գերհարկվեն կամ զորակոչվեն անցանկալի պատերազմներում կռվելու: Ի հակադրություն այս գաղափարների, ինչպես արդարացիորեն նշում է Ֆորեսթ Լին, «կոնֆուցիականների ուսուցիսական իդեալը լավ կարգավորված հիերարխիկ հասարակությունն էր, որը կառավարվում էր բարեգործ կառավարչի կողմից», որը միանգամայն տարբերվում էր դաոսականության առաջարկած իդեալից (Forest Lin 19):

Եզրակացություն

Պետք չի կարծել, որ Լաոձըի, Ճուանձըի կամ ընդհանրապես դաոսականության մեջ ուսուցիսական գաղափարները իրականությունից կտրված պատրանքներ էին, որոնք անհնարին են եղել իրականացնել: Դաոսականության մեջ ուսուցիսական և իրականությունը իրար հետ սերտ կապակցված են, քանի որ դաոսական մտածողների առաջարկած գաղափարները հենց այն էին, ինչ «երկնքի տակ» (天下 թիեն սյա) ստեղծելու էին իդեալական հասարակարգ, որտեղ մարդիկ ապրելու էին պարզ, խաղաղ և երջանիկ: Իդեալական հասարակարգից հեռանալու պատճառը դա դաոից հեռանալու մեջ է, բայց երբ Դաոն վերականգնվի, և մարդիկ վերադառնան իրենց սրտի ու մտքի պարզությանը, ապա այդ ժամանակ նաև կհաստատվի իդեալական հասարակության մոդելը: Նման հասարակության մեջ կայսրերը, կառավարողները նույնպես ունեն իրենց դերը, նշանակությունն ու անելիքները: Իդեալական հասարակարգ կառուցելու համար պետք է լինի իմաստուն կառավարող, որը պետք է հետևի Դաոյին, ունենա այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ «անգործությունը» կամ ինչպես չինարենով է հնչում՝ «ուվեյ» (无为), պարզություն ու համեստություն, լինել առանց կրքի ու ցանկությունների, լինել փափուկ:

Մի խոսքով՝ կարելի է ասել, որ դաոիզմն ունի իդեալական հասարակության մի պատկերացում, որտեղ տիրում է խաղաղություն, սոցիալական ներդաշնակություն և նյութական բարեկեցություն՝ մարդուն անհրաժեշտ ամենապարզ ու ամենաանհրաժեշտ բարիքների առկայությամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հարությունյան, Էդուարդ. *Համատեքստի հերթափոխը. վիճարկումը իբրև անհնարինի հաղթահարման կամ ազդակում*. Բանբեր Երևանի Համալսարանի, Փիլիսոփայություն, Հոգեբանություն, No2, էջ 3-16, Եր., 2016:

2. Маннгейм, Карл. *Идеология и утопия*. М., 1994.

3. Bender, Frederic. *Taoism and Western Anarchism*. Journal of Chinese Philosophy 10, p.5-26, 1983.

4. *Cambridge Dictionary* <https://dictionary.cambridge.org/>

5. Chiang, Sing-Chen Lydia. *Visions of Happiness: Daoist Utopias and Grotto Paradises in Early and Medieval Chinese Tales*. Utopian Studies, Vol. 20, No. 1 2009.
6. Chuang Tzu. *The Complete Works of Chuang Tzu*. Trans. Burton Watson. New York: Columbia University Press, 1968.
7. Kurz, Johannes. *The Compilation and Publication of the Taiping yulan and the Cefu yuangui*. *Extrême-Orient Extrême-Occident*, p.39-76, 2007.
8. Laozi. *Daodejing*. Guangzhou, GD: Guangzhou Press, 2006.
9. Lin, Forest. *Utopias East and West: the relationship between Ancient and Modern Chinese Ideals*. *Alternative Futures* 3, 1980.
10. Hsiao, Kung Chuan. *A history of chinese political thought, volume I: from the beginnings to the Sixth Century A.D.* trans. F.W. Mote, Princeton: Princeton University Press, 1979.
11. Roger, Ames. "Is Political Taoism Anarchism?". *Journal of Chinese Philosophy*, Volume 10, Issue 1 (March 1983), p.27-47.
12. Steavu, Dominic. *Cosmogony and the Origin of Inequality: A Utopian Perspective from Taoist Sources*. *The Medieval History Journal*, 2014.
13. 《老子今注今译》，陈鼓应，北京，2006.
14. 魏源. 《老子本义》，华东师范大学出版社，2010.
15. 《中国经济思想史》，上海社会科学院出版社，1986.
16. 李昉. 《太平御览》，[宋]，中华书局，1991.
17. 《老子·八十章》 <https://www.kekeshici.com/guji/laozi/quanwen/35845.html>. Available: 01.10.2023
18. 洪撰. 《抱朴子外篇》：[五十卷]，上海：上海古籍出版社：新華書店上海發行所發行，1989.
19. *Utopia*, <https://www.britannica.com/topic/utopia>. Available: 01.10.2023
20. 结绳记事, <https://baike.baidu.com/item/%E7%BB%93%E7%BB%B3%E8%AE%B0%E4%BA%8B/2333887>. Available: 01.10.2023

WORKS CITED

1. Harutyunyan, Eduard. *Hamateksti hertapoxy, vitcarkumy ibrev haghtaharman kam azdakum* [Shifting Contexts: Challenging as a Signal of Overcoming the Impossible]. Banber Yerevani Hamalsarani, Pilisopayutyun, Hogebanutyun, No2, p.5-12, Yerevan, 2016. (in Armenian)
2. Mangeym, Karl. *Ideologiya I utopia* [Ideology and Utopia]. M. 10994. (in Russian)
3. Bender, Frederic. *Taoism and Western Anarchism*. *Journal of Chinese Philosophy* 10, p.5-26, 1983.
4. *Cambridge Dictionary* <https://dictionary.cambridge.org/>
5. Chiang, Sing-Chen Lydia. *Visions of Happiness: Daoist Utopias and Grotto Paradises in Early and Medieval Chinese Tales*. Utopian Studies, Vol. 20, No. 1 2009.
6. Chuang Tzu. *The Complete Works of Chuang Tzu*. Trans. Burton Watson. New York: Columbia University Press, 1968.
7. Kurz, Johannes. *The Compilation and Publication of the Taiping yulan and the Cefu yuangui*. *Extrême-Orient Extrême-Occident*, p.39-76, 2007.
8. Laozi. *Daodejing*. Guangzhou, GD: Guangzhou Press, 2006.
9. Lin, Forest. *Utopias East and West: the relationship between Ancient and Modern Chinese Ideals*, *Alternative Futures* 3, 1980.
10. Hsiao, Kung Chuan. *A History of Chinese Political Thought, volume I: from the beginnings to the Sixth Century A.D.* ,trans. F.W.Mote, Princeton: Princeton University Press, 1979.

11. Roger, T. Ames. "Is Political Taoism Anarchism?", *Journal of Chinese Philosophy*, Volume 10, Issue 1 (March 1983), p.27-47.
12. Steavu, Dominic. *Cosmogony and the Origin of Inequality: A Utopian Perspective from Taoist Sources*. The Medieval History Journal, 2014.
13. *Laozi jinzhu jinyi*, Chen Guying ("Laozi's Annotation and Translation"), Beijing, 2006.
14. Wei, Yuan. *Laozi benyi, Huadong shifandaxue chubanshe* 【*The Original Meaning of Laozi*】. East China Normal University Press, 2010.
15. *Zhongguo jingji sixiangshi* 【History of Chinese Economic Thought】. Shanghai Academy of Social Sciences Press, 1986.
16. Li, Fang. *"Taiping Yulan"*, [Song Dynasty], Zhonghua Book Company, 1991.
17. *Laozi bashi zhang* (the 80th chapter of Laozi) <https://www.kekeshici.com/guji/laozi/quanwen/35845.html>. Available: 01.10.2023
18. Ge, Hong. *"Bao Pu Zi Wai Pian"*: [Fifty Volumes], Shanghai: Shanghai Ancient Books Publishing House: Published by Xinhua Bookstore Shanghai Publishing House, 1989.
18. *Jie sheng jishi* [keep records by tying knots], <https://baike.baidu.com/item/%E7%BB%93%E7%BB%B3%E8%AE%B0%E4%BA%8B/2333887>. Available: 01.10.2023
18. *Utopia*. <https://www.britannica.com/topic/utopia>. Available: 01.10.2023

THE TAOIST MODEL OF AN IDEAL SOCIETY

ANNA ADAMYAN

*Nanjing University, Faculty of Philosophy,
Ph.D. Student in Religious Studies,
Nanjing city, China*

Dao De Jing (DaoD Tsin) holds a pivotal place in Taoism, ranking as one of its most significant texts and boasting the distinction of being the most translated book worldwide after the Bible. Surprisingly, within the Armenian context, there exists no translation of this seminal work from its original Chinese. The primary objective of this article is twofold: to introduce the Armenian translation of the 80th chapter of Dao De Jing and to offer interpretations of key expressions within that chapter based on Chinese commentaries on Dao De Jing.

Additionally, this work embarks on an examination of the concept of an ideal society or utopia as presented in various Taoist writings.

This exploration is rooted in a comprehensive study encompassing the original texts, their English translations, and contributions from various scholars in the field.

The study culminates in the recognition that the vision of a "small country with few people," as described in chapter 80, stood in stark contrast to the ambitious pursuits of contemporary Chinese rulers and was deemed unfeasible. Notably, prominent Taoist figures, Laozi and Chuangzi, both regarded a return to a simpler, original social order as a prerequisite for fostering peaceful and contented lives. One of the most necessary conditions of the Taoist utopia was that people should go back to the old way of making notes by knotting ropes, live a very simple life, but most importantly, there should be no communication between the inhabitants of neighboring countries.

Keywords: *utopia, Taoism, Dao De Jing, social order, ideal society, Chuangzi, Laozi, primitive social order.*

ДАОССКАЯ МОДЕЛЬ ИДЕАЛЬНОГО ОБЩЕСТВА

АННА АДАМЯН

*аспирант религиоведения
факультета философии
Нанкинского университета,
г. Нанкин, Китай*

Дао Дэ Цзин (DaoD Tsin) занимает ключевое место в таоизме, являясь одним из наиболее важных текстов и имея репутацию наиболее переводимой книги в мире после Библии. Однако до сих пор нет армянского перевода этого фундаментального произведения с китайского оригинала. Поэтому основные цели данной статьи следующая: представить армянский перевод 80-й главы Дао Дэ Цзина и предложить интерпретацию ключевых выражений в данной главе на основе китайских комментариев к Дао Дэ Цзину.

Еще одной целью данной статьи является исследование концепции идеального общества, или утопии, как она представлена в различных таоистских произведениях. Это исследование основано на обширном анализе оригинальных текстов, их английских переводах и деятельности различных ученых в данной области.

Исследование завершается признанием того факта, что видение «маленькой страны с небольшим числом людей», описанное в 80-й главе, резко контрастировало с амбициозными стремлениями современных китайских правителей и считалось невозможным. Заметим, что две выдающиеся фигуры таоизма, Лаоцзы и Чжуанцзы, считали возвращение к более простому, первоначальному социальному порядку предпосылкой для установления мира и счастья. Одним из самых необходимых условий даосской утопии было то, что люди должны вернуться к старому способу ведения записей путем плетения веревок, жить очень простой жизнью, но самое главное – не должно быть никакого общения между жителями соседних стран.

Ключевые слова: *утопия, таоизм, Дао Дэ Цзин, социальный порядок, идеальное общество, Чжуанцзы, Лаоцзы, первоначальный социальный порядок.*